Հաստատում եմ՝
Տնօրեն.....Լ.Քևնաքսզյան
.....31.08.....2023թ

Արա Հարությունյանի անվան հ.49
հիմնական դպրոց
8 -րդ դասարան
Դասղեկ՝ Կ. Ստեփանյան

Դասղեկի աշխատանքների ծրագիր

2023-2024 ուսումնական տարի

Դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

N	Գործունեու -թյան ոլորտը	Բովանդակություն	Կա – տար- ման ժամ- կետ
		ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) *Դասարանը բաղ-կացած է 32 աշակերտներից , որոնցից յուրաքանչյուրն արդեն ձևավորված անհատականություն է : Նրանք տարբեր են թե՛ բնավորությամբ և պահվածքով, թե՛ ուսման նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով: Ունենք երկու գերազանց և 6 լավ սովորող աշակերտներ:* *Դասարանի դասղեկությունը ստանձնել եմ այս ուսումնական տարում, և իմ աշխատանքները պլանավորելիս փորձել եմ լուծել մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են շտապ լուծում:* *Դասարանի աշակերտները ազնիվ են, անմիջական , բայց ,լինելով անցումային շրջանում, բավական կամակոր են և շատ կարևորում են իրենց կարծիքը :Կազմակերպված են,ունեն ընդհանուրգաղափարի ու գործի շուրջ հավաքվելու ունակություն : Ժամանակին կատարում են իրենց առջև դրված հանձնարարությունները:*	
1	**Կազմակերպ -չական աշխատանք- ներ**	Նախատեսվող ուսումնա- դաստիարակչական աշխատանքները ուստարվա ընթացքում *Այս նպատակով նախատեսվում է կատարել մի շարք աշխատանքներ, որոնք կօգնեն աշակերտներիս լինել հայրենասեր, սիրել հայրենի բնությունը և պահպանել այն:Կարևորել աշխատանքը և գիտակցել , որ աշխատասիրության շնորհիվ կկարողանան հարթել իրենց ճանապարհը և հասնել բարձունքների: Զրույցների միջոցով սովորեցնել գնահատել գեղեցիկը, հաղորդակից լինել հոգևոր արժեքներին , իմանալ հայկական ծեսերն ու ծիսակատարությունները: Կազմակերպել էքսկուրսիաներ , այցելություններ թանգարաններ , պատկերասրահներ , մշակութային այլ կենտրոններ: Ծագած բոլոր կարևոր հարցերի ու խնդիրների քննարկումները անցկացնել դասղեկի ժամին :*	
2	**Աշխատանք ային դաստիարա- կություն** Խնդիրները՝	Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը , դեպի աշխատավոր մարդը:* *Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:* *Մաքուր պահել դասասենյակը , շրջապատյ, միջանցքն ու դպրոցը :* *Մասնակցել դպրոցում կազմակերպվող բոլոր աշխատանքներին :*	
	Հոգևոր	Հոգևոր դաստիարակություն	

3	դաստիարակություն Խնդիրները՝	*Հայ երեխան պետք է դաստիարակվի ազգային ոգով, ճանաչի ազգայինն ու հայ հոգևոր մեծերին:* *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*	
4	Գեղագիտական դաստիարակություն Խնդիրները՝	Գեղագիտական դաստիարակություն *Սովորեցնել գնահատել գեղեցիկը, վեհը, բարին, վսեմը, լավը:* *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*	
5	Ռազմահայրենասիրական դաստիարակություն Խնդիրները՝	Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ :* *Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:*	
6	Ֆիզիկական դաստիարակություն Խնդիրները՝	Ֆիզիկական դաստիարակություն *Կարգախոսը՝ <<Առողջ հոգին առողջ մարմնում>>:* *Ֆիզկուլտուրայի դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*	
7	Բնապահպանական դաստիարակություն Խնդիրները՝	Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում , և ցույց տալ այդ խնդիրների գլոբալ լինելը:* *Կենսաբանության ուսուցչի հետ համագործակցությունը կհեշտացնի այս հարցի լուծումը :*	

8	Աշխատանք ծնողների հետ: Դպրոց-ընտանիք կապը Խնդիրները՝	Դպրոց - ընտանիք կապը *Ստեղծել սերտ կապ դպրոցի և ընտանիքի միջև* *Դասարանում ծագած հարցերն ու խնդիրները լուծել ծնողների օգնությամբ:* *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է բարձր հիմքերի վրա լինի դպրոց - ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:*	

ՈՒՍՈՒՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին կիսամյակ

Թիվ	Ուսումնակադաստիարակչական աշխատանքներիբովանդակությունը	Ուսումնական շաբաթներ	Կատարող անձ
1.	Սեպտեմբերի 1՝ գիտելիքի և դպրության օր. Համադպրոցական միջոցառում: Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում և նոր ուստարվա անելիքների պլանավորում:	**1** սեպտեմբեր 8	աշակերտ դասղեկ
2.	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	11 սեպտեմբեր 15	աշակերտ դասղեկ
3.	Անկախության անգնահատելի դերը մեր կյանքում: Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, օրհներգ:	18 սեպտեմբեր 22	աշակերտ դասղեկ զինղեկ
4.	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները . նպատակն է հստակեցնել աշակերտների իրավունքներն ու պարտականությունները:	25 սեպտեմբեր 29	աշակերտ դասղեկ
5.	Դասարանական փոքրիկ միջոցառում՝ նվիրված ուսուցչի օրվան:	2 հոկտեմբեր 6	աշակերտ դասղեկ ուսուցիչներ
6.	Երեբունի – Երևան	9 հոկտեմբեր 13	աշակերտ դասղեկ
7.	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով պարզել, թե աշակերտների մոտ որ կարողություններն են ավելի զարգացած:	16 հոկտեմբեր 20	աշակերտ դասղեկ
8.	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	1 նոյեմբեր 3	աշակերտ դասղեկ

9.	Զրույց՝ <<Պահպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը>> թեմայով:	6 նոյեմբեր 10	աշակերտ դասղեկ
10.	Եղիշե Չարենց – 126. այցելություն Չարենցի թանգարան:	13 նոյեմբեր 17	աշակերտ դասղեկ
11.	<< Գնահատիր ինքդ քեզ >>. նպատակն է արժևորել, ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլու - ծություն:	20 Նոյեմբեր 24	աշակերտ դասղեկ
12.	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավորու - թյուն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կար - ծիքները:	27 նոյեմբեր 1	աշակերտ դասղեկ
13.	<< Բնական աղետներ >> . ներկայացնել բնական աղետների առաջացման պ ատճառները և դը-րանց հետևանքները: Սպիտակի ավերիչ երկրաշարժ:	4 դեկտեմբեր 8	աշակերտ դասղեկ
14.	Զրույց՝ << Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում>> :	11 Դեկտեմբեր 15	աշակերտ դասղեկ
15.	1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում: Դասարանական միջոցառում՝ նվիրված Ամանորին:	18 դեկտեմբեր 22	աշակերտ դասղեկ ծնողներ

2-րդ կիսամյակ

ԹԻվ	Ուսումնակադաստիարակչական աշխատանքներիբովանդակությունը	Ուսումնական շաբաթներ	Կատարող անձ
1.	Զրույց՝ <<Հանդուրժողականություն, ընկերասիրություն , համերաշխություն>>	9 հունվար 13	աշակերտ դասղեկ
2.	Հայրենիք , ես զարկն եմ քո բազկի . զրույց՝ նվիրված հայոց բանակին	16 հունվար 20	աշակերտ դասղեկ զինղեկ
3.	Զրույց՝ <<Համացանցը մեր կյանքում . արգելված խաղեր>>	23 հունվար 27	աշակերտ դասղեկ
4.	Անտարբերությունն է ծնում չարիքներ . օգնություն դասարանի թույլ և հետ մնացող աշակերտներին	30 հունվար - 3 փետրվար	աշակերտ դասղեկ
5.	Զրույց՝ նվիրված հայկական եկեղեցական տոներին . Տյառնընդառաջ	6 փետրվար 10	աշակերտ դասղեկ ՀԵՊ-ի ուսուցիչ
6.	Մարդու գործն է միշտ անմահ. ինչ լավ գործեր եմ արել դպրոցիս և քաղաքիս համար	13 փետրվար 17	աշակերտ դասղեկ
7.	Անաղարտ պահենք մեր մայրենին. դասարանական միջոցառում՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրերին	20 փետրվար 24	աշակերտ դասղեկ
8.	Զրույց՝ <<Գարունը այնքան ծաղիկ է վառել, Գարունը այնպես պայծառ է կրկին>>	27 փետրվար 3 մարտ	աշակերտ դասղեկ
9.	Երաժշտության կախարդական ուժը . երգի ուսկնդրում	6 մարտ 10	աշակերտ դասղեկ երաժշտության ուսուցիչ

10.	Իմ սպորտային հաջողությունները. խրախուսել դասարանի՝ սպորտում հաջողությունների հասած աշակերտներին	13 մարտ 17	աշակերտ դասղեկ ֆիզկուլտուրա-յի ուսուցիչ
11.	Զրույց՝ << Դառը ճշմարտություն, թե քաղցր սուտ >>	18 մարտ 22	աշակերտ դասղեկ
12.	Զրույց՝ <<Իմ անձնական հիգիենան >>	1 ապրիլ 5	աշակերտ դասղեկ բուժքույր
13.	**Այցելություն Հայոց մեծերի պանթեոն**	8 ապրիլ 12	աշակերտ դասղեկ
14.	Զրույց՝ <<Ինչ է պատասխանատվության զգացումը>>	15 ապրիլ 19	աշակերտ դասղեկ
15.	Ցեղասպանություն և ոճիր. այցելություն Ծիծեռնակաբերդ	22 ապրիլ 26	աշակերտ դասղեկ ծնողներ
16.	Զրույց՝ <<Ինչպես ապացուցել քո ճշմարտությունը >> թեմայով	29 ապրիլ - 3 մայիս	աշակերտ դասղեկ
17.	Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել. արցախյան հերոսամարտեր, 44-օրյա պատերազմ; Այցելություն Եռաբլուր	6 մայիս 10	աշակերտ դասղեկ ծնողներ
18.	Թատերական ներկայացման կոլեկտիվ դիտում	13 մայիս 17	աշակերտ դասղեկ ծնողներ
19.	Ավարտում եմ 8-րդ դասարանը	20 մայիս 23	աշակերտ դասղեկ